

նուին երկու խումբ ձագերը . ասոնք պէտք է մէկփեթակի մը մէջ լեցընել , ետքը գետնի վրայ փուած խսիրի կամլաթի մը վրայ թափել . փռոցին երկու ծայրը կըդնես մէյմէկ փեթակ , ետքը մեղուները երկու կըզատես . թէ որ սկսին իրար կանչելով զատուիլ աղէկ է . իսկ թէ որ երկու թագուհիներն ալ մէկ փեթակին մէջ մտնեն , նորէն պէտք է փռել : Ուէ որ թագուհիները տեմնես՝ կըրնաս բռնել զատել , ու փեթակիներու մէջ գնել . մէկէն աշխատաւորները իրենց քով կըժողվին : Իսինք թէ երբոր երկու խումբն ալ տկար ըլլան՝ պէտք է միացընել զանոնք . թէ որ երկու փեթակի մէջ ժողվեր ես , պէտք է փեթակին մէկը գնես իր տեղը , ու մէկալը մօտ գետինը . ետքը իրիկունը փոխես տեղերնին , ու սկաւառակով մը կէս լիպրէ մեղը դընես քովերնին . թէ որ առաւօտը նայիս որ թագուհին մէկը մեռերէ , ան երկու խումբերը կըմիանան իրարու հետ , ու վախճանիդ կըհասնիս . չէ նէ նորէն կըկնելու է նոյն գործողութիւնը . վասն զի մէկ փեթակի մէջ երկու խումբ մեղուներու զատ զատ աշխատիլը աղէկ չէ . նոյնպէս թէ որ իրեք կամ չորս օր իրարմէ ուշ ելլող խումբերը ուղես իրարու հետ խառնել , պէտք է՝ առաջ ելլող խումբը շփոթել , ու մեղը շուրջուր ցանելով մեղուները ցրուել , ետքը նոր խումբը վրան պարպել :

ԱՐԴՅՈՒԹԻՒՆ

Եկանական այլայլ դեղէր :

ԵՐԲԵՄՆ կըլլայ որ գիպուածով մը կամ լինալով կամ զարնուելով մէկուն ակռան կըթափի . ասանկ ատեն պէտք է նորէն ակռան տեղը դնել զգուշութք , և որպէս զի տեղէն ըշշարժի երկու ծամելեաց մէջտեղը կը

տոր մը բամնգակ դնելու , ու թաշկինակով մը կզակը գլխուն վրային կապելու է , և հիւանդը պէտք չէ որ խօսի կամ լեզուն շարժէ , որպէս զի ակռան ալ տեղէն չշարժի : Ի՞սկ կերպով ակռան երբեմն խիստ աղէկ կըհաստատուի իր առջի տեղը . բայց թէ որ ելած ակռան վերի ծամելիքէն է , տեղը հաստատելը աւելի դժուար կըլլայ :

Իսկ ակռայի ցաւը , որ երբեմն սաստիկ կըլլայ ու գէշ հետեանքներ կունենայ , անանկ դարման մը չունի որ ամէն անգամ յաջողի . մենք հոս գլխաւոր գեղերը զուրցենք՝ որ շատ անգամ ցաւը կանցընեն . միայն թէ ասոնց մէկը չյաջողինէ՝ մէկալը պէտք է փորձել , թէ որ ան ալ չյաջողի՝ ուրիշ մը : Ուէ որ մէկը ակռայի ցաւին հետ մէկտեղ իջուածք ալ ունենայ , պէտք է ոտքը տաք ջրի մէջ դնէ , ջրին մէջը քիչ մը մանանեխի ալիւր՝ կամ աղ ձգելով . կընայ նաև 15 կամ 20 հատ տղրուկ՝ դրուիլ անկըծին ետեր : Ինայց թէ որ իջուածք չունի , ուրիշ դարմաններ ընելու է : Ինչպէս երբոր մէկուն ակռան փտտած ու ծակ է , բամնգակէպատրոյգ մը կընայ շինուիլ ու ջրով հարած ափիոնի մէջ թաթխուիլ , ու ակռային ծակին մէջը խոթուիլ :

Ի՞փիոնին տեղը կընայ բռնել նաև ձեթը բալասանը բարկ քացախը , մեխակի եղը , սաստիկ օղին , Վ. որնիայի ջուրը , եթերը , և ասոնց նման տաքցընող ու թմրեցընող հեղուկները , որով ակռան ցաւ չզգար : Երբոր ակռան փտտած չէ , բաւական է պղտի դգալով քիչ մը ձերմակ խաշխած ջուր խմբնել , և կամ գաւաթ մը շաքարով խառնած ջուր՝ մէջը մէկ ցորենաչափ ափիոն դրուած :

Փտտած ակռայի ցաւին գէմ շատ զօրաւոր գեղ է կաթիլ մը ծծմբային թթուուտով կամ արջասպի եղով՝ ակռան այրել . բայց աս բանս շատ զգու-

շութք պէտք է ընել. այսինքն ասեղի
մը ծայրով պզտի կաթիլ մը կաթե-
ցընելու է փտտած ակռային ծակին
մէջ՝ զգուշանալով որ լստերքը չայրին:
Իայց թէ դիպուածով լնտերքին կամ
բերնին մէջ կաթի, պէտք է մէկէն
հիւանդին բերանը ջրով ցողուել տալ:
Իսանկ ժանտաջրով այրելը դիւրին է՝

Երբոր փտտած ակռան վարի ծամե-
լեաց վրայ ըլլայ. իսկ թէ որ վերն է,
ան ատեն պէտք է հիւանդին գլուխը
ան կերպով դնել որ կարելի ըլլայ
հեղուկը ակռային վրան կաթեցընել,
ու քանի մը վայրկեան անանկ կենայ:

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԴՐՈՒԹԻՒՆ



Լուսա ու Ա էսու-կ հրաբուխները :

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐ կարդացողը նախ
ընթաց թերթին մէջ հրաբուխին
ինչէն ու ինչ կերպով ըլլալը իմանալէն
ետև, կարժէ որ համառօտ տեղեկու-
թիւն մը առնէ աս երկու գլխաւոր
հրաբուխներուն, այսինքն Լատային
ու Ա եսուվին վրայ ալ՝ որ իսկստ ա-

նուանի են պատմութեան և աշխար-
հագրութեան մէջ:

Հրաբուխներուն մէջ ամէնէն մե-
ծը չէ, բայց ամէնէն անուանին է
Լատա լեռը Աիկիլիա կղզիին մէջ:
Լոր վրայ միայն մէկ քանի տեղե-
կութիւններ ունինք, ու կերևնայ թէ